կընքին զարկում եւ ահագին շառաչով փլում։ Իսկ Մաշթոցը նայում է. նայում է փոսփորէ իր աչքերով Լենինին։

Ա՜հ, Լենինը վաղուց մումիա է։ Հրաշալի Եգիպտոս՝ տա՛ք երկիր։ Մոքիս մէջ, մեծ վէրքի նման բացւում է Հերոդոսի այն էջը, ուր նա պատմում է, թէ ինչպէս տաճարների մօտ, հրեշաւոր մումիա պատրաստողները գեղեցիկ աղջիկների թարմ դիակների հետ նախ զուգւում էին։

Մարմինս դալարւում է։ Զգում եմ սառը դիակների դարձելի չօշափումը։ Ակռաներս կռնատում եմ. շրթունքներիս մէջ կապոյտ մի արիւն ասեղներ է ծակծկում։

Քիչ յետոյ, մեծ մի թմբուքիւն ծածկում է ինձ իր վերարկուի տակ։ Պատկերները, ձայները, Լենինը եւ Մաշթոցը մտնում են բամպակէ մի ամպի մէջ։ Բիբերիս առջեւ սրածայր լոյսեր են լողում։ Խուլ մի աշխարհում անհանգիստ ձիեր ամբակները դեռին են զարնում։

Աչքերս բաց եմ անում ու նախ ոչինչ չեմ նշմարում։ Սենեակի միւս անկիւնում մի մոմ է վառուած, որի դողդղացող լոյսի շուրջը սեւ ստուերներ են շարժւում։ Ցած ձայնով խօսակցում են։ Դուռը կիսաբաց է. մի աքլոր երգում է։

Երեւի Լուկաչինն է, գնում է Զանգեզուր։

Բայց աչքերս յողնած են, փակւում են։ Խոր մի ձորի մէջ նստած նայում եմ լեռներին։ Ամպերը գլխատել են բարձր գագաթները։ Այնքա՞ն բարձր, այնքա՞ն բարձր... Երկինքը ցցուել է անասելի հեռուներում. բոլորովին անջատուել է երկրից եւ՝ երբ նայում եմ, չունչս կտրւում է։ Ահա ձորի միջից ձիաւորների մի խումբ է անցնում։ Ճերմակ, անհանգիստ ձիերի վրայ նստած վիթխարի ասպետներ։ Մեծ փափախներով, սեւ եւ երկար եափունջիներ ուսերին։

Երկինքը կապոյտ է, իսկ դեղնագոյն, ամենի լեռները ձիւնով են ծածկուած։ Օձապըտոյտ կածանի վրայից ձիաւորների խումբը բարձրանում է վեր։ Ասպետները մտահոգ նայում են իրենց չորս կողմը եւ ձեռքերի շարժումով խորհրդաւոր նշաններ անում։

Հասկանում եմ։ Գնում են Գրաալի սկիհը փնտռելու։

Գրաալի սկի՛հը։

Զանգեզուրը երկրագնդի վսեմ մտքերից մէկն է եւ բնական է, որ այդ գաղտնիքը ծածկուած լինի այնտեղ։ Ուր կայ միտք՝ կայ եւ գաղտնիք։

Ուր կայ միտք՝ կայ եւ գաղտնիք։
Տուէք բանային պղնձէ դրան —
Պիտի գան.
Պիտի գան շուտով ասպետներ
Հարաւի կողմից,
Պիտի որոնեն
Խորհուրդ եւ նշան։

Ճերմակ ձիերը անհանգիստ են. թափահարում են իրենց գլուխը, առաջի ոտքերը վեր բարձրացնում եւ կատաղի վազում դէպի վեր, դէպի վե՛ր... Ամպերը շուանի վրայ կախուած մեծ սաւանների նման, քամիի շնչի տակ, ուռչում են, տատանւում, ծալւում, փուում։ Կապոյտ երկնքի վրայից սպիտակ ստուերներ են անցնում։ Լեռները սկսում են շարժուել, եւ ձիաւորների խումբը քանի գնում այնքան անհիմանում է, դառնում է օդային, վեր է ածւում ամպի եւ լայն թեւեր առած թռչում է երկընքի է՛ն բարձր կողմում։

Իսկ ձորը ճնշում է ինձ։ Կրծքիս վրայ մեծ մի քար են դրել եւ չգիտեմ՝ ո՞վ ոտքերս ու ձեռքերս սեղմում է։

Աչքերս բաց եմ անում։ «Ոտքի՛ ելէ,— ասում են,— ամէնքս պատրաստ ենք, գնում ենք»։

* * *

Կուչ եմ գալիս կառքի մի անկիւնում։ Նոր Բայազետը, հնավաճառի մօտ գնած գրքի միջից հինաւուրց, դեղնած մի նկարի նման, վայր է ընկնում աչքերիս առջեւ։

Հոգիս թառել է սեւ մի մելամաղձութեան մէջ։

Մարմինս կոտրտուած, ուժասպառ, կարծես ամէն կողմից խոր վէրքերով է ծածկուած։ Ամենափոքր շարժումը ցաւ է պատճառում։

Երբ հասնենք նաւ՝ արեւը կը ծագի։ Երբեք այդքան ջերմութեան պէտք չեմ զգացած։ Միթրայի ջերմաջերմ կրօնքը մարմնիս մէջ տենչում է եւ աղօթում։ Արե՛ւ, արե՛ւ։

Դաշտանկարը խարխուլ կառքի հետ ծռւում է, բարձրանում ու յանկարծ աղմուկով

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան